

891.99  

---

U-12





18

ԿՈՅԻ

Կ

4067

Կ

891-99

U-12

ՍԵՉԸՆԳԵՐԸ



# Պ Ա Տ Կ Ե Ր Ն Ե Ր

1. Դիրքի խարոյկը.
2. Սոված ենֆ.
3. Բուշտուց խասան
4. Շֆանշանկե՛ր... Շֆանշանկե՛ր...

1001  
0695

Զանգեզուրի բուրֆ-հայ ընդհարումներից առած:



Թ Ի Ֆ Լ Ի Ս

Տպարան «ՀԵՐԱԴԵՍ» Ս. Պ. Մարտիրոսյանի, Մաղաթեան փ. № 5.  
1907 (4)



52121

# ԴԻՐՔԻ ԽԱՐՈՅԿԸ

Ընկեր Ստեփանի յիշատակին





## ԳԻՐՔԻ ԽԱՐՈՅԿԸ

(Պատկեր հայ-քուրդական ընդհարումներից)

Մուժը վրա հասաւ:

Գիւղից մեր ականջին հասնող ձայները յա-  
ջորդաբար լռեցին... ոչ մի ձայն...

Բարակ մշուշը գաղտագողի կերպով, բարձ-  
րաբերձ ժայռերի կողերը լիզելով եկաւ ու մեզ  
չըջնպատեց:

Ցուրտ ու սև գիշեր էր:

Դիրքի տասնապետը պատուիրեց խարոյկ  
պատրաստել, վառել. ինքն էլ ետփընջու մէջ  
փաթաթուելով, ոտքի ելաւ շըջակայքը դիտելու:

Մրգօն և Պարիսը իրանց հաւաքած երկար  
ու չոր ծառածղներից իսկոյն խարոյկ կազմեցին,  
դիրքից քիչ հեռու երեք կոշտացած և դուրս  
ցցուած ժայռերի արանքում: Մինչ նոքա խարոյկ  
վառելով էին զբաղուած, ընկերներն էլ խարոյ-  
կի շուրջը նստած, ետփընջիների բացուածքից  
նոցա էին դիտում:



Շուտով առաջին պեծերը ելան. շուրջ պառկածները աւելի մրսել սկսան և աւելի խոր փաթաթուեցան ու կռուչ եկան, (իրար սեղմուեցան) քիթների տակ փնթփնթալով:

— Վահան ի՞նչ ելաւ. հարցրեց մէկը ետփընշու տակից խոպոտ ձայնով:

— Գնաց մեր շուրջ դիտելու. պատասխանեց երկրորդը:

— Տղա, գործ չունէր, աս մութ և խաւարչտին գիշեր, ամպեր կուտակ-կուտակ կեռան, Վահան էս քարերու, էս ձերպերու մէջ ի՞նչ դիտելու բան ունի. ո՞ւմ հետք կ'որոնէ. ասաց երրորդը և ապա տիրեց լուռութիւն:

Բոլորեքեան կծկուած էին: Խարոյկից բարձրացող թանձր ծուխի հետ, սկսեցին բարձրանալ և կրակի առաջին պեծերն ու բոցերը, որոնք դուրս էին սլոււմ դարսուած փայտերի արանքներից գէպի վեր:

Տղերքը մէկ-մէկ վեր կացան և աչքները արորելով մօտեցան կրակին:

Նոցանից, աղերանցից, մէկն էր բացակայ. Հէր: Նա գանձոււմ էր գիրքապահներից քիչ հեռու գանձող բարձր ժայռի գլխին, դիտարանում:

Հէրն էլ գիշերուայ հետ նօթերը կիտել և դժկամակ էր իր բաղդից, որ այդպիսի մոռախապատ ու մութ գիշերուայ առաջին հերթը իրանն է:

Քիչ-քիչ մըթմըթաց, քրթմնջաց քթի տակ ու լուց:

Տղերքն էլ յենուած ժայռի կողերին, ետփընշիւները կիսով չափ թիկուսքներին էին ձգել ու նղղել:

Նախ խօսել սկսան Մրգօն և Պարիսը, ապա ամենքին էլ խօսք հասաւ: Նոքա, այդ դիրքում կազմած նախկին խարոյկների հետ համեմատելով, նոր կազմածի առաւելութիւնը ասացին: Բոլորի կարծիքը այն էր, որ այդպիսի խարոյկ չէր վառուած այդ դիրքում:

Ապա տիրեց լուռութիւն:

— Ո՞վ է գալիս... լսուեցաւ դէտակի ձայնը:

— Որո՞տ... երկար ձայնեց նրան մօտեցող տասնապետը:

Հէր... Վահան... փոխադարձ կրկնեցին նոքա և միասին մօտեցան դիտարանին:

— Ի՞նչ խաւար-դուման է մեզ պատել. սատանան էլ այս գիշեր չէ կարող շարժուել. ասաց Վահանը:

— Մութ ու ծանր գիշեր է. աւելացրեց Հէրը:

— Նստելու յարմար տեղ էլ ունիս. չէս մրսում. հարցրեց Վահանը:

— Լաւ ակնու ունիմ. ասաց Հէրը և փարփեց չեչոտ, ակնուած և դուրս ցցուած մի քար և ապա ուղեկցեց դիտարանից մեկնող տասնապետը:



պետին, որ երևացող կրակի ուղղութեամբ դէպի տղերքն էր գնում:

Հէրը մնաց իր տեղում:

— Լսւա կրակ ունիք տղերք ջան, ասաց Վահանը ձեռքերը դէպի կրակ պարզելով:

— Տճ, էս ժամանած ուր էիր. էլ գործ չունէիր. խաւար գիշեր ում կորսնէիր էս քարերու մէջ. հարցրին տղերքը այս ու այն կողմից և տեղներից բարձրանալով, կոնթելու տեղ բացին Վահանի համար:

— Ինչ արած. դիտարան գացի. սառնասրբաութեամբ պատասխանեց Վահանը և ետիրնջում փաթաթուելով տեղաւորուեցաւ տղերանց արանքում: Նրա միմիայն դէմքն էր երևում, որ լուսաւորուած էր կրակի լուսով:

Տիրեց գերեզմանական լուռութիւն: Խարոյկը թեժացաւ, բոցավառուեցաւ և նրանից թռչող պեծերը, ծուխի քուլաների հետ թաւալուելով, դէպ երկինք էին սլանում:

Տղերքը աչքները յառած նայում էին բարձրացող բոցերին, և կարծես թէ, նոցա, էն շիկացած կրակէ լեզուների մէջ, յի կորուստ էին փնտրում, մի անգին կորուստ որոնում:

Վահանի դէմքը այս գիշեր թախիծ, մտախոհութիւն էր արտայայտում:

— Ա՛խ, խարոյկ, խարոյկ. խորը հառաչեց նա:

Ընկերները պըլշած աչքները դէպի Վահանը դարձրին.

— Գիտեմ, ինչ անցաւ մտքէդ. ասաց Ասլանը ախրութեամբ:

— Որ մենք էլ, խարոյկն էլ միատեսակ ենք վառվում, հա՛. հարցրեց Վահանը, սիրա թափանցող շեշտակի հայեացքը դէպի Ասլանը ուղղելով.

— Հա՛, քո արև դիտնայ. աղւոր նմանութիւն մը կայ քո ըսածին մէջ. պատասխանեց Ասլանը, կոթնած տեղը յարմարուելով:

— Այո՛, վառվում ենք մենք, վառվում է և խարոյկը, խորը հառաչեց Վահանը և շարունակեց:

— Բայց մեզնից ծուխ չէ ելնում ու աչքի չէ զարնվում... Թո՛ղ անտես վառուենք... ինչ կըլինի. մըմնջաց թախծալի ձայնով և մեղմօրէն երգել սկսաւ Վահանը.

Լէ՛ լէ՛ եաման,

«Լերան գլխին, վառ խարոյկի

«Շուրջ նստած են հայդուկներ,

«Բոց ու պեծեր թեժ խարոյկի,

«Հասնում են մինչ սև եթեր:

«Վայ լէ, լէ՛ եաման, ջան ետը:

Երգի առաջին բառերի ախորժալուր և մեղամաղձոտ ձայնից բոլորը սթափուեցան: Վահանը երգը վերջացրեց լուեց, լուեցին և ամենքը:



Լուս էր շրջակայ սար-ձոր, լուս և տրտում էին տղերքը:

— Ախպէրներ, խօսէք, որքան լուս, այնքան ծուռ. վրդովեց տիրող լուսթիւնը Վահանը:

— Է՛յ, ի՛նչ խօսենք. ասաց Պարիսը ժամացոյցին նայելով:

— Հերթը ո՞ւմն է, թող ելնէ, շուտ կրկնեց Պարիսը, ժամացոյցը աւելի դէպի կրակը բռնելով և նայելով:

Վազգէնը ոտքի ելաւ, աջ ու ձախ ձգձգուեցաւ, դրմբած ոտքերին հանգիստ տուաւ և ուղղուեց դէպի դիտարանը:

Անցաւ մի քանի րոպէ:

— Որո՞տ... Որո՞տ... կրկնեցին ձայները:

Պահ մի անց, հէրն եկաւ, Վազգէնի տեղը նստեց և հոգատարութեամբ, խնամքով փաթաթուելով Եսայիի մէջ, գլուխը ցած դրաւ գետնին:

Մեր տղերքը, ամենքն էլ կռթնած կոշտ ու լերկ քարերին, ետփրնջէքը վրաներն առած, լուս և խողող քուն մտան: Շրջապատի խորին լուսթիւնը վրդովում էին յաճախակի տրաքտրաքող թեթ խարոյկի պեծերը և իրար յաշորգող դէտակները:

Անցան ժամեր, լուս ու ծով ժամեր, խարոյկը այլ ևս բոց ու ծուխ չունէր, և գետնի երեսին դիզուած էր արշինաչափ բարձրութեամբ բլրած և ոսկէգոյն շեղջ:

Գիշերուայ վախճանը մօտ էր: Եւ անա ցըր-տախտն մեղմ քամի բարձրացաւ, լերան գլխի դիտարանը ընդգրկող և ժայռերի կողերը լիզող մառախուղը մի կողմ վանեց, նոր, զմայլելի և հրապուրիչ տեսարան բացուեցաւ: Աննման երկինք:

Լուսինը, իր վերջին քառորդում կանգնած էր աստեղագարդ երկնակամարի կենտրոնում և աստղերի փայլիլոցի, առկայծող ցօլքերի տակ, նսեմանում էր լուսնի կաթնանման շողը:

Ջընաղ այս տեսարանում, երկնքում խարոյկ, երկրում խարոյկ, ամեն տեղ խարոյկ, աննման ժամում, ով որ դիրքապահներից գարթնում էր, այս նորաբոյս հանդէսի չքնաղութեանը ապշած, պլլշած աչքերով արթուն էր մնում, և շտապ-շտապ բոթելով քնած ընկերով կողը, արթնացնում և դիտելու էր հրաւիրում այս նորասբանչ տեսարանը, այս գուարթացած բնութիւնը:

Բացի Վահանը և վերջին դէտակը, ամենքը արթուն էին:

— Եար՛ք, Վահան որ զարթնէ, ի՛նչ հրապուրանք պիտ զգայ այս տեսիլին մէջ. ասաց Պարիսը:

— Նա շատ բան կզգայ, բայց մեզ չի յայտնի իր զգացմունքը. ախ՛ով, հառաչով կարտայայտէ սրտին ծանրագին վիշտը ու անբառ, անիմաստ այդ ախերու շարանը, սրտին վիշտը և ա-



լեկոծ պատկերը կբերեն մեր հանդէպ: Նա շատախօսներէն չէ. հառաչով ու մրմունջով կը սփոփէ իրեն ծանրագին ժամերը և յաճախ կատակներ կընէ ցաւի թեժութիւնը մոռնալու համար: Այս կարծիքին եմ եկած ես, երկար տարիներ նորան ընկերակցելէ ետքը. երկարաբանեց չէրը:

— Իրաւ կըսես. շատ ճիշտ ես նկատել, վրաբերին տղերքը:

Կրկին լուռութիւն տիրեց, որի ժամանակ ոմանք նոցանից կրակի վրա տաքացնել, ուտել սկսան ընթրիքից մնացած բոքօն հացի կտորները:

Նոյն այդ ժամին, յանկարծ Վահանը մէկէն ոտքի ելաւ, աչքերը տրորեց, նոր տեսարանը դիտեց և ապա ետփրնջում փաթաթուած, դէպի դիտարանը ուղղեց իւր քայլերը:

— Վահան չըխօսաց. ասաց չէրը.

— Շփոթուած կերևար. վրա բերաւ Ասլանը: Տիրեց լուռութիւն.

— Որո՞տ... Որո՞տ... հնչուեցան ձայները և Վահանը մօտեցաւ Նժդէհին. նոքա քովէ քով նստան:

— Որո՞տ... չէ, լաւ խօսք ենք ընտրել այս փիշեր. ասաց Վահանը:

— Այո, լաւ է. բայց որոտ բռնին կսագայ, որ այս սար ու ձոր ալ որոտացուին, որոնք երկու և կէս դար է հրացաններու որոտումներ չեն

տեսած, պատասխանեց Նժդէհը, շեշտակի հայեացքով Վահանին նայելով:

— Նժդէհ ջան, միշտ կրակ, կռիւ, պայթիւն որոտ կսիրէ սիրտդ, մի շտապիր, թերևս, այս դիրքի առաջին կռիւը փառաւոր է լինելու. այդպէս եմ ես գուշակում. հանգիստ սրտով ասաց Վահանը և շարունակեց.

— Մեր սիրտը, տես, էն շառագունած արևելքին կը նմանի: Ո՞րքան ջինջ ու յստակ է, տես, էն օղակաձև մշուշը, որ բլրակի գլուխ սքօղած է, որքան նուրբ ու կապուտին է տալիս. եթէ փոթորկի պատահի, ամեն ինչ իր գեղը կըկորցնի, իր դիրքը կփոխի, նոյնն է և մեր սիրտը, որ կռուի, արեան ժամին կըկորցնէ իր գեղը: Մեր սրտի փոթորիկն էլ կռիւն է... կռիւը: Տես, մատնացոյց արաւ Վահանը, արևելքը վարդի պէս կըբացուի, կըպճնուի:

— Երնէկ, էս խեղճ հայերու կեանքն էլ, էն արեածափի շողին պէս ջինջ ըլլար. մեղմօրէն մրմնջաց Նժդէհը, և գլուխը կախեց:

— Կլինի, Նժդէհ ջան, կլինի. մենք անքուն, անդարար ենք, բայց ցածը, ձորում, քանի որբեր, քանի անտիրական հայեր հանգիստ քուն են մտած մեր և միակ մեր շնորհիւ. մերն է փառքը, մերն է ապագայի գովքը, քաջ և անձնուրաց պաշտպանի յիշատակը: Նոցա, էն անմեղ որբերի ազատ երգերում մեր արածը կը փայլի



լուսի պէս, մեզ պաշտելու չափ կը սիրեն: Գործել է պէտք, հսկել է պէտք, անվերջ, անդուլ, և վանել...

Իսկոյն ընդհատեց իր վերջին խօսքը և խնայազարի պէս սեղմելով Նժդէհի ազդրը, անշեղ հայեացքը դէպի արևելք բեռեց Վահանը:

Լուռ էին երկուսով. Նժդէհը գողում էր Վահանի յանկարծակի շփոթութիւնից, բայց չէր համարձակվում պատճառը հարցնել:

— Դիտակը... դիտակը... մրմնջաց դողդոզացող շրթունքների արանքից Վահանը և դիտակը աննելով, անյազ, ագահաբար դէպ արևելք երկու բլրակի ստորոտներ դիտել սկսաւ:

Նժդէհը այրվում էր անհամբերութիւնից. նա պատրաստեց հրացանը:

— Ձիաւորներ... շըշընջաց Վահանը հազիւ լսելի ձայնով և առանց դիտակը աչքերից վերցնելու, ասաց.

— Գնա, և զգուշաբար զարթեցրու տղերանց, իմաց տուր թող զգոյշ մնան... Բայց նոքա արթուն են... Նժդէհ... թող դիրքերը բռնեն... շնւտ... շնւտ... ը՛շ... ը՛շ կամանց...

Նժդէհը հեռացաւ, կամանց... դեռ կրկնում էր Վահանը, կարծես թէ այդքան հեռաւորութեան վրա Նժդէհի որ և է շարժումը կարող էր թուրքերին նկատելի լինել:

Դիրքապահները Նժդէհի շտապ գալուն վրա

վեր թռան և իսկոյն պատրաստուեցան: Ձիաւորների մասին լսելուն պէս, կրակ կտրուեցան նոքա, օձերի պէս սողացին, դիրքեր մտան, և քանի ընդունում արդէն կազմ և պատրաստ էին դիրքերում կռուելու համար: Ետում էր նոցա արիւնը:

Քանի դարզվում, լուսանում էր, Վահանը աւելի պարզօրէն էր տեսնում թշնամի խմբերի խառնակ և անկարգ զրութիւնը, և մտքում, նախկին մեծ սարսափից յետոյ, այժմ ժպտում, ծիծաղում էր նոցա վրա:

Դիրքեր մտածների համար ընդէն տարի էր թուում. ետում, վառվում էին նոքա և անհամբեր դէպ արևելք դիտելով, սրտատրոփ սպասում էին «Յառաջ» հրամանին, որ ելնէին դիրքերից, առաջ վազէին, աւելի մօտ դիրքեր մտնելով, համազարկերի տարափ տեղային թշնամու գլխին:

Անցաւ մի բանի ընդէն և անա փողը զարկին. նշանի համաձայն տղերքը խմբուեցան Վահանի շուրջը:

— Դէպ յառաջ... ամուր դիրքեր բռնել. Վահանը հրաման տուաւ և նոյն ակընթարթում, տղերքը արծուի պէս թև առան, և բարձր բլուրների կատարների անմատչելի ծերպերում գետեղուեցան ամենքը: Սպասում էին:

Դժոխքից անգամ անտանելի էր նոցա զրութիւնը, երբ կտրուի ետրաբ առաջին նշանը, մտածում էին նոքա:



Վահանը ընկերներն ծանր դրութիւնը զգալով, ճնշող համբերութեան ծանրութիւնէն ազատեց նոցա իր ազդանշան ծր... ընկ... զարկով, որին յետեց «կը-րակ» հրամանը. սի, կրակ ու կրակ... սար-ձոր, քար-քօլ, պըլշել մնացել էին տասնեակի անօրինակ կռուին, ամեն ինչ խլացաւ գարկերի ձայնից. արևը խաւարեց. շրջակայքից վառօդէ անուշահոտութիւն էր բուրում. խլացաւ ջրվէժը... կը խլանար և որոտը և ամեն ինչ...

Փառք տղերանց... իսկ թշնամիները անբուսակաւ այս կրակից գլուխներն ազատելու համար, իրար էին խառնուել և աննպատակ մի քանի գարկեր տալով փախուստի դիմեցին: Փախուստ... և որպիսի իրարանցում, հարայհրոց, և ամեն ինչ խառն և իրար մերուած:

Տղերքը ոգևորուելով, աւելի առաջ անցան անընդհատ կրակելով և առաջ խաղացների ձայնը, ուրախութեան աղաղակը, հագիւ էր մեր ականջին հասնում. «լերան գլխին, շուրջ խարոյկի»... երգի ուժեղ հնչւող եղանակի կիսատ-պուստ հնչիւններն էր մեզ հասնում միայն:

Թշնամու ամօթալի, այդքան շուտ, կարճ և տմարդի պարտութիւնը շատ էր ոգևորում մեր տղերանց:

Հրացանների և դըրդացող ձորերի ձայնից ոտքի ելան մօտիկ գիւղերից նոր, թարմ ուժեր

և տասնեակը, հարիւրաւոր թիկնապահներ ստացաւ:

Ընդարձակ դաշտում միմիայն գնդակն էր կարողանում հասնել փախչողի ետքից և ասել, չէ, դու յետ մնացիր:

Չարկերը և իրարանցումը տեցին երկու և կէս ժամ և ահա լսուեցաւ փողի ձայնը, վերջանըջանը. ամենքը իրանց տեղերում հանգիստ առան. ոտքից մինչ գլուխ բրանաշաղախ էին տրդերքը:

— Գուշակութիւնդ... Վահան ջան... խեղաւող ձայնով բացականչեց Նժդէհը, լայն ձակատը սրբելով:


— Որոտը... խարոյկը... Նժդէհ... այ քեզ խարոյկ... յոգնածութիւնից հագիւ մըմնաց Վահանը գետին փռուելով:

Հանգիստ առան ամենքը... հանգիստ տուին և փախչողներին, որոնցից շատերն էին յետ մընացել:

Այդ օրը ուրախ և զուարթ էր նոցա ժամերը. ցնծութեան երգերին վերջ չկար: Հասաւ երեկոն. կապուտակ և աստեղագարգ էր երկնականարը. ամեն ինչ հմայիչ, կախարդիչ էր բնութեան այդ ծոցում:

Իրիքապահները նոր խարոյկ կազմեցին և նրա թեժ կրակի վրա շարեցին գառան մսից ձիպոսների վրա շարած խորովելու կտորները: Շու-

1001  
3690





տով ընթրիքը պատրաստուեցաւ:

— Ընկերներ, սկսեց Վահանը, նայեցէք, և լեռների կատարներում, ձորերի բերաններում խարոյկներ կազմեցէք... Թողէք որ նոքա վառուին, պղլուին, և նոցա պէս, դուք էլ ընկերներ, այրուեցէք, հսկեցէք և նոր խարոյկներ կազմեցէք: Նոր շունչ, նոր հռանդ ստացած, ձեր ապագան յաւերժացրէք... բորբոքեցէք խարոյկները... հսկեցէք, զիրքապահ ընկերներ. վերջացրեց Վահանը և երգել սկսաւ.

«Լերան գլխին, վառ խարոյկի...»

«Շուրջ նստած են հայդուկներ...»

«Բոց ու պեծեր թեժ խարոյկի,

«Համուժ են մինչ սև եթեր»...»

Վայ լէ, լէ, եաման... եար ջան...

Երգն աւարտեց և նոքա մնացին իրանց պաշտելի դերի մէջ: Պարծանք և փառք ձեզ, ազնիւ զինւորներ, անմոռաց ընկերներ:

## Ս Ո Վ Ա Ծ Ե Ն Ք

ՊԱՏԿԵՐ ՄԻՆՔԷՆԴԻ ԿՈՏՈՐԱԾԻՑ



## ՍՈՎԱԾ ԵՆՔ

(Պատկեր Միսեֆեդի կոստրածից)

Գ. աւանի մոռացուած փողոցներից մէկի խոնաւ ներքնայարկերից մէկում, մարուելուն մօտ, պլպլում էր մի սև ճրագ: Նրա աղօտ լոյսի տակ հազիւ նկատելի էր մի հնամաշ անկողին, որի զգզուած փաթաթանքի մէջ պառկած էր մաշուած, թխադէմ երեսով, փոս ընկած աչքերով մի հիւանդ կին:

Նորա բարձի աջ և ձախ կողմերում նստած լալիս էին երկու մերկ ու չիփլաղ երեխաներ, որոնք անընդհատ թափւող արցունքը սրբում, ցուրա քամու սուլոցից ձիգ ու կուշ էին անում և հիւանդ մօր դէմքին նայելով, կանչում էին. «Սոված ենք»:

Խեղճ մայր... նա էլ շատերից մէկն էր. նա էլ զրկուեցաւ իր ոչխարի սուրուններից, կով-զամշուկներից. նրա տուն, տեղ, ապրուստ թուրքերի համար կոռախնձոր դարձաւ: Իսկ ինքը լերկ ու սկլոր, անխնամ ու անօգնական ընկած



էր մահճում յուսահատ և անմխիթար: Զոյգ որբերի լացը, նոցա հեկեկանքը, կոչնակի պէս տարուբերում, ճմլում էր նորա սիրտը:

Խեղճ Ազիզ... Ի՛նչ էր քո անցեալը և ի՛նչ է ներկադ... Թշուան կին:

Նահապետական տան 14 շնչից բաղկացած անդամները սրի մատնուեցան, սրախողխող եղան էն պատիժ ու կրակ, էն երկնային պատուհաս կոտորածի և հազիւ հազ Ազիզը, իր երկու որդոց հետ, Տիգրանի և Սմբատի ազատուել կարողացաւ, որոնց պրծումն էլ մի հրաշք էր, մի կատարեալ բախտաւորութիւն:

Հրաշալի փախուստ... Կոտորածի մութ և մուսյլ զիշերը, երբ կենդանի մնացած մարդիկ սպանուածներին երանի կուտային, երբ մարդ իր սրտի բաբախումըն անգամ կուզէր ընդհատի, որ ձէն ու ձունը իր ուր լինելը չըմատնի, մեր Ազիզը մի պարկում քիչ հաց մէջքին կապած, երկու որդոց թևերից բռնած, լուռ ու մունջ, գողալով, դուրս ելաւ ներքնատան դռնից, ուր նորա կոտորածի ժամին թաքնուած էին, և փողոց ընկաւ, առաջ սլացաւ:

Նա, ոտքերին հագած ունէր մի գոյգ գուլպայ, կրակոտ աչքերը այս ու այն կողմ դարձնելով, մտաւ արիւնով ներկուած, հառաչանքով լցուած փողոցը:

Սկզբում, բացի շների անկարգ ոռնոցը, նա

ոչ մի ձայն չէր լսում փողոցներում, և յանկարծ Ազիզի ականջին հնչուեցաւ մի խորը անի, մի վերջին անքոց, ճիշտ Ռուշանանց պատի տակին:

Ազիզը սոսկաց, բայց սրտապնդուելով մօտեցաւ ընկածին:

— Ո՞վ ես, հայ ես, սաղ ես. կերկերուն ձայնով հարցրեց Ազիզը:

Ոչ մի ձայն... ընկածի էն անխը վերջինն էր եղել: Սև մթութեան մէջ Ազիզը մօտիկից շօշափեց նրա արիւնլուայ գլուխը և շորերը. ճանաչեց որ ընկածը հայ է: Ապա հանեց նրա տրեխները, ինքը հագաւ և երեխաները ուսերին գնելով, առաջ անցաւ:

Քարի էր կպչում նրա ոտը, քօլի էր կըպչում, բայց ոչ մի ցաւ, ոչ մի անի չէր հանում. որդոց փրկելու համար նա պատրաստ էր նոյն իսկ կրակ նետուելու:

Հասաւ գիւղի մօտով հոսող Գեշտաս գետին, կռացաւ, մի քանի կում ջուր բերանն առաւ, սրտին հով արաւ և գառիվեր ճանապան մտաւ:

Քրտինքը խեղճի ձակտից առուի պէս էր հոսում, աղի, լեղի քրտինք, որ երբեմն օղի սուր հոտանքի հետ նրա բերանն էր թափվում, կարծես թէ սրտի պակաս դառնութիւնը աւելցնելու, լերթ ու թօքը այրելու, չորացնելու:

— Ո՞ւր... ո՞ւր... գոյգ բեամբախտներս վերցրած, եարանք, ո՞ւր եմ գնում ես. ցաւ բեզ Ազիզ,



կրակ քեզ Ազիզ. այսօրինակ մի շարք հարցեր, իրանց աղ ու մրմուռ, մթին պատասխաններով այրում էին նրա ուղեղը: Թունոտ էր նրա հայեացքը. ուր որ նայէր թոյն կը թորար, մահ կը ծնէր նորա մէկ-մէկ նայուածքը: Ի վերջոյ գառովերի գլուխը հասաւ, երեսաներին ցած դրաւ, նստեց և մի մի կտոր հաց ձեռները տալով, շահեց նոցա:

—Ո՛ւր ենք գնում. լալագին ձայնով հարցրեց նա եօթ տարեկան Տիգրանից:

—Փախչենք նանի... գնանք... պատասխանեց Տիգրանը, հացը ծամելով:

—Նանս, նորարաց և թոթովուն լեզուով ապաց չորս տարեկան Սմբատը. «Հաց չեմ ուտում, կարնձ եմ ուզում... կարնձ»... Լացագնեց նա, և հացի կտորը մի կողմ շարտեց:

—Կարնձ... կարնձ... մտմտաց ինքն իրան Ազիզը և աւելացրեց. եաման բալէք, գուլում բալէք. ձեր անցրած օրերին, ձեր ման եկած տղերին, չայիր-չիմաններին դուրբան լինեմ:

Յորդառատ արցունքը խեղդում էր նրան, բայց նա չէր դադարում խօսալուց. խեղճ Ազիզ...

—Ձեր սար-քօլին դուրբան, դատարկին ընկած ղշեր, անտուն ղշեր. ձեր անքուն աչքերին, անդարար գլուխներին մեռնիմ, սիրուն բալէք, եաման բալէք:

Կոչնակի պէս տխուր մտորումների շարանը

աւարտեց և դեռ չը ցածքած ճակտով ոտքի ելաւ, առաջ քայլեց: Ձէն ու ձուն չէր հանում նա. մութ ու խաւար գիշերուայ գերեզմանական լուսթիւնը խանգարում էր փնջալի արտաշնչելով և ոտքերի տրոփիւնով:

Շատ քար—քօլ անցաւ, ձորակներ, բլուրներ յետև թողեց և ի վերջոյ կանգ առաւ «ղազի» գեօլի ափին: Կանաչ և թաւ խտար գորգի պէս փռուած էր եղէգնապատ գեօլի շուրջը. ուրախ սրտի համար լուս ցերեկը մէկ նստել ու կանգ առնելը հարիւր արժէք: Բայց գուման էր գիշերը. խտտի հեգիկ շարժումը Ազիզին երկիւղ, վախ էր բերում, փափուկ թաւշնման կանաչը կոշտուկ քար էր թուում նորան:

Սիգաւէտ խտտի վրա նստած երեսաներին մի կտոր հաց կիսեց Ազիզը և ինքն էլ կուացաւ, լճի յտակ ջրին ընկաւ, պապակ, խորոված սրտին դով տալու, այրող կրակը, տապը հանգնելու:

—Նանի, քունս տանում է. ասաց Տիգրանը.

—Նանի, կարնձ եմ ուզում. լալիս էր Սըմբատը:

—Խեղճ նանի, ցաւ ու կրակ նանի. կեանքս էլ եթէ ձեզ տամ, ձեզ ազատեմ, դարձեալ անտէր, անտուն, անապահով էք խեղճ բալէքս, ուր պիտի թառ լինիք, ո՞վ պիտի ձեզ պահի, պահպանի: Եարմբ, լաւ չէր լինիլ, որ երկուսիդ էլ այս լճի մէջ խեղդէի, ես էլ վերջ տայի իմ դրժ-



բախա կեանքիս, և աղատէի ձեզ էլ, ինձ էլ այս տանջանքից, այս աւեր ճանալից... անյա... լնւ... անձայն տարտարոսի շաւղից... կորուստի ճանալից...

— Ի՞նչ... Էս... ասում... դժբախտ մայր... Յանկարծ լճի միւս ափից լուեցաւ մի խրոպոտ ձայն:

Չայնը լսելուն պէս Ազիզը դողի մէջ ընկաւ և երեխերքը իրան մօտեցրուց, կրծքին սեղմեց:

— Համբերիր... մայր... շարունակեց ձայնը.

— Ինչպէս դու չես կարող ապրիլ, համբերիր... երանի է քեզ, դու որդիք ունիս: Մեր տան 12 անդամներից ես... միայն ես ազատուեցի... սհ... այն էլ սոսկալի, սոսկալի... դրութեան մէջ. վիրաւոր եմ, արիւնը հոսում է առանց կանգ առնելու: Մայր... մայր... երանի է քեզ, ես զրկուած եմ երկու ձեռքերիս դաստակներից. անի կացնով խփեցին: Մեծ աղջիկս հազիւ կարողացաւ փաթաթել ու փախչել դէպի այս կողմը... ես էլ նրան եմ յետևում... նրան... եմ յետևում... արիւն... արիւն...

Անձանօթ կնոջ ձայնի վրա որքան Ազիզը վախեցաւ, բայց երկար խօսալուն վստահացաւ, սրտապնդուեցաւ և հարցրեց.

— Ո՞վ ես դու, թշուառ ընկեր...

— Յաւս մի նորոգիլ քո նոր հարցմունքով... սհ... գնահ, գնահ, ճանաչե՛ք, մրմնջաց հոգեմաշ վի-

րաւորը: Լուսինը դուրս գալու վրա է, շարունակեց նա. կարող է խաւարը լուսաւորուել ամպերի արանքով... երեխերքդ... որդիքդ ազատիր... Բայընդուրցիք ձեզ որ տեսան, կըկոտորեն անխնայ... Էս... Էս չեմ գալու... ինձնով մի ուրախանալ, քեզ ընկերել չեմ կարող... փախիր, լուսինը դուրս է գալիս... փախիր... Էս ցաւ եմ, Էս ան ու տանջանք եմ... փախիր... երեխերքդ ազատիր... լուսինը... սհ... դուրս կըգայ... վայ... սիրտս... սհ... լուսինը...

Ազիզը, առանց նրա խօսքի ընդհատման սպասելու, ոտքի ելաւ, ուսերն առաւ որդոց և կանաչ դաշտով սլանալ սկսեց: Անցաւ նա քարոտ դաշտեր, խոտաւէտ, ծաղկապատ դաշտեր-բլուրների կողեր մաշելով տաննեակ անգամ նրա ոտը քարին կպաւ, քօլին կպաւ, նա ան չըհանեց, այլ յաճախ լսելի ձայնով մրմնջում էր նա. ողորմի քեզ, տրեխատէր... եթէ քեզ չսպանէին, իմ ոտքերի հալը ի՞նչ կըլինէր. ողորմի էր ասում, առանց իմանալու, թէ ո՞ւմ տրեխն է իւր հագինը:

Ահա և մութ ամպերի միջից լուսինն էլ իր գլուխը հանեց և Ազիզի ճանաչէն լուսով պսակուեցաւ. խաւար դումանով պատած սրտին լուսնի ցօլքը ի՞նչ կարող է անել:

Շատ գնաց Ազիզը և լուսաբացին կանգ առաւ Գ. աւանի հիւսիսային բլրակներից մէկի վրա: Առտու լուսի տակ Ազիզի աչքին զարնուե-



ցան նաքերին հագած տրեխները և իսկոյն ճանաչելով թէ ումն է, բարձր ու կերկերուն ձայնով ճչաց նա և գետին փոռեցաւ, եղբայր... եղ...բայր, շնջալով: Որդիքը սուգ ու շիւան սկսան:

Տիգրանը և Սմբատը, ուշաթափուած մօր դէմքին ընկած այնքան արցունք թափեցին, մինչև որ, Ազիզը ինքն իրան զգաստանալով, ուշքի եկաւ, աչքերը տրորեց և պարկեց մի քիչ հաց տալով լացող որդոց, նոցա դէպի իւր գոգը քաշեց: Երեխաները չոր հացի կտորը այս ու այն կողմ ծռմուսլով կրծոտել սկսան և ապա գլուխները մօր ծնկներին յենած, քուն մտան երկուսով:

Տիգրանը քնի մէջ կանչում էր. փախչէ՛նք, նանի, փախչէ՛նք. իսկ Սմբատը, կարագ... կարագ էր կանչում:

Ի՞նչ էր քո հալը, Ազիզ: Եղբօր տրեխները, իր ընծայած տրխատաններով հագին, էն առտու քաղցր հովին լալ սկսեց, որի դառնութիւնից երգեցիկ թռչունները մխկտալով թողին, հեռու փախան. իսկ շրջապատի անշարժ սար-ձորը նրա լացի, հառաչի ցաւով էին տնքում... հեծում... սգում միալար:

— Անբախտ եմ ես. սգում էր Ազիզը. գոյգ որդոցս եսիր. վայ... վայ... առաւօտուն արևի շողն սև խաւար է ինձ համար. վայ... թէ որ պատուէր էս ցաւի ծով դարձած սիրաս, էս

խոր ձորերն ցաւ ու դարդով կը լցուէր. վայ... գու էլ չըկաս, անգութ Աստուած, ո՛ր է բարիքդ մարդկանց, սրանից էլ նեղ օրին ես ինձ խղճալու: Չկաս, ո՛ր ես, տես իմ հալը... վայ, վայ... լուսանում է, խաւար եմ ես... արևի շողը խոտի ցօղին փայլ կրտայ, իսկ իմ սրտին անվերջ, անբուժ ցաւ կուգայ... առաւօտ է, ան զոմշուկներ, եկէք կթեմ, տաւարածը ճանախին կանգնած կըկանչէ, վայ... վայ... խեղճ բալէքս քուն են մտել, կարագ... կարագ կըկանչեն... վայ... վայ... ծաղիկ ջան, բեզ դուրբան, հիմա քեզ ո՞վ կըկթէ, տիւռկի ջան... վայ... վայ... ճի, մեր էն կեանքն, էնքան ուրախ, ինչո՞ւ լեղի թոյն դառաւ. արծուի պէս վրա տուին թուրքերը. կոտորեցին, սպանեցին, թալանեցին, բռնաբարեցին մեր աղջկանց ու հարսերին: Անգութ Աստուած, մեր ո՞ր մեղքի համար էս գուլումի ծովը ձգեցի՞ր: Չան բալէք, թրից փախած, սրից փախած, հօր, եղբօրց, քուրոց զխակներ թողած, սարի գլխին քուն էք մտել, անվաթան դշեր, վայ... վայ... վայ... ճի, Սառա ջան, անբախտ աղջիկ, Ահմադի ձեռքը կոտորուէր ու կուրծքդ չըկոխէր. էյ, նազիկ ջան, առաւօտ է, դէհ, սուր չըկոխէր. էյ, նազիկ ջան, առաւօտ է, դէհ, շուտ վեր ել, մայրք քեզի ջրի կուղարկէ, սիրտն է պապակ ու խորով... վայ... վայ... սև օրեր... սև օրեր...

Սուգ ու շիւան, աղէմբունջ, կրակէ հա-



ուսններ թափեց Ազիզը իր երկար սուգով:

Նորա ձայնից, ճանական կորցրած Չառին էլ Ազիզի պատկից հարևանուհին մօտ եկաւ, տեսաւ նորան, գրկախառնուեցան նոքա և երկուսով իրար կողքի նստած, նոր վայեր, նոր արցունքի գետեր կազմեցին... հառաչները, ակները իրար միացան: Հերթով էին սգում:

— Ազիզ ջան... սկսեց Չառին, մեծ տղիս կանցնով սպանեցին, Ազիզ ջան. աղջկանս մաղերից բռնած, քարով գլուխը շարդեցին իմ աչքի առաջ, Ազիզ ջան... խեղճ հարսիս ծծերը սուրով կտրեցին, բաշի ջան... վայ... վայ, բաշի ջան... վայ...

Երկար ժամանակ նոքա լաց եղան. սգում իրանց բոլոր գլխով անցած դէպքերը թուեցին երկու անբախտները, ձէն-ձէնի տուած մորմոքում էին:

— Չառի ջան, ցաւի ընկեր... ասաց վերջապէս Ազիզը աչքերը սրբելով.

— Սև է այսուհետև մեր օրը, Չառի ջան, սև է մեր կեանքը մինչև գերեզման, բաշի ջան. գնանք... գնանք... վերջ չըկայ մեր ցաւին, գրնանք, գնանք, անբախտ ջան...

Չառին և Ազիզը յոգնած ու դադրած, ոտքի ելան, քնած երեխաներին վեր կացրին, մէկ-մէկ ուսերն առան և իջան Գ. աւանը:

Երբ մօտեցան աւանին, նոցա լաց ու կոծի

վրա մարդիկ հաւաքուեցան, ճանապարհը կտրեցին և հարցրին նոցա հասած պատուհասի մանրամասնութիւնը: Լսողները նոր արցունք քամել սկսան և հազար ու մի ավասանքով փողոցը լցրին:

Նոցա գլխին եկած փորձանքը լսողներից մէկը Ազիզին և որդոց խղճաց, իր տանը տեղ տուաւ, իսկ միւսը Չառուն: Եւ այսպէս խեղճ Ազիզը ապրում էր մի մոռացուած փողոցի նկուղում, ուր արևի լոյսն անգամ անգօր էր ներս թափանցելու, իսկ Չառին՝ մի փոքր քարատակում էր պատասպարվում, մի հին դարմանոցում:

Խեղճ Ազիզ. նրա լի, տրաքվող տան փոխաբէն, դռներից խնդրած, գզգզուած անկողինը, մըրըմարին այրւող սև ճրագը, և շէմքում ընկած ջրի կուլան էր երևում միայն:

Այս անտանելի, անվերջ չքաւորութեան մէջ, հազիւ չորս ամիս միայն Ազիզը կարողացաւ ապրել. իսկ ցուրտը, աշնան սառը բամբին վրա հասնելուն պէս, նա մահիճ մտաւ, կարիքները նրան մզեցին, քամեցին, չոր շունչն էր մնացել, որ հազիւ նկատելի կերպով բարձրացնում էր նրա ընկճուած կուրծքը:

Բարձի աջ ու ձախ կողմերում նստած, մերկ ու տկլոր որբերը լալիս էին, սոված ենք... նանի... սոված ենք... կանչում էին նոքա:

Դուան բացուածքից ներս սողացող ցուրա



բամին իր վզոցոցով միանալով երեխաների լացին,  
տեսարանը ահաւոր, սոսկալի էր դարձնում:

Այս ամենի վրա էլ աւելանում էր Ազիզի  
կեանքի պէս մարւող սև ճրագը:

Յուրտ էր երեկոն, սոված էին երեխաները  
և հոգեվարքի մէջ էր Ազիզը: Նրա վերջին մնաք  
բարևը և կտակը, երկու լացող որդոց իրան մօ-  
տեցնել և համբոյրներ տալը եղաւ. սոված ենք  
կանչող երեխաների հետ, նա էլ կանչեց հազիւ-  
լսելի ձայնով:

— Չան... բալ... էք... սոված էք... դուք...  
սոված... եմ ե...ս... սովա...ծ ենք... ես գը...  
նում... եմ... մե...ր... տու...նը... եկ...էք...  
ես... խը...

Ազիզը հոգին աւանդեց. Տիգրանն և Սմբատը  
լաց եղան և ապա կարծելով որ մայրիկը քնել  
է, իրանք էլ նրա բարձի աջ ու ձախ կողմերում  
քուն մտան:

Անցաւ մի քանի ըոպէ, մարուեց և նոցա  
սև ճրագը...



## ԲՈՒՇՏՈՒՆՑ ԽԱՍԱՆ

(Պատկեր Մինքէնդի կոտորածից)

Աման... էն ի՞նչ փախուսաւ էր որ կատար-  
վում էր:

Ինչպէս ուրուրը վրա է տալիս թըխսկանին  
և ծագուկները այս ու այն կողմ, ծըւ... ծըւա-  
լով, թևերնին թափահարելով, քարի, քօլի տակ,  
պատասպարան են փնտրում, գլուխ են պրծաց-  
նում, այնպէս էլ մինքէնդցիք լաց ու կականով,  
կրծքները ծեծելով, վազում, փախչում էին այս  
կամ այն կողմ, իրանց ստուէրից անգամ սար-  
սափ գգում, դողում էին: Մեծ գգուշութեամբ  
ամենքը ճրագի լուսից փախչում, մութ, լոբի տե-  
ղերով էին վազում աչքի չերևալու համար:

Գիւղի շուրջը էլ ամբութիւն, քար-քօլ չը-  
մնաց լցուեցան. փախչող հեռացող կանանց, աղջ-  
կերանց թիւ չկար: Եղինջների թաւուտները,  
փշոտ — մացառների արանքները մտնել ջանացող-  
ների մարմնի տասնեակ տեղերից արիւն էր դուրս  
ցայտում, քերծվում էր փշերի, քարերի արանք



մտնելիս, բայց կարծէք թէ նոքա ցաւ չէին  
զգում:

Այլ տեսարան կար գիւղամիջում. պրիստաւ.  
Սաղըղի և գրազիր Շամիրի զինւորները այս ու  
այն կողմ վիստում, գոռում գոչում էին.

— Գլուըն ուշաղլւր... ջըհնթ տըքի ջըհնթ...

Եւ սրերը մերկացրած, զինւորները վազում,  
փախչող հայերին յետ էին դարձնում, հաւաքում  
էին մօլլա Ազիմի բակը, որպէսզի բոյորին միա-  
սին կոտորեն:

Այսպիսի խառնաշփոթ տեսարանից գուրս  
կար և մի թէ և փոքր, բայց կսկծալի, լալու տե-  
սարան.

Այդ Բուշտունց Զաւաղի աղջիկ կոյր Սա-  
սայի և նրա մօր Ազիզի դուռթիւնն էր: Նոցա  
տան բոլոր անդամները փախել, ցրուել էին, սար  
ձոր ընկել. հարսները երեխաներին վերցրած,  
տղամարդիկ իրանց գլուխները վերցրած, առն,  
տեղ միւլը, ապրուստ թողել և փախել էին: Տանն  
էր մնացել 20 տարեկան կոյր պարկեշտ, զթա-  
ռատ Սասա և մայրը, Ազիզը:

Այդ անօրինակ խառնաշփոթութեան մէջ,  
մօր ձեռքածութեամբ Սասան գնաց և երկուսով  
մտան իրանց տան մօտ գտնվող մարազը: Իուրը  
պինգ կողպեցին և ետքի կողմից քարերով ամ-  
րացրին:

Իսկ ի՞նչ էր կատարվում դրսում, այդ նոցա

համար զաղտնի էր. դռան բացուածքից միմեան  
նոցա էր հասնում կանացի ճիչեր, երեխայոց լա-  
ցի ձայներ և տղամարդկանց հառաչներ: Լուող  
ձայները նոցա սիրտը էրում, խորովում էր. խեղ-  
ճերը այնքան էին կրծքները ծեծել, որ արիւն  
էր հոսում նոցա կրծքից: Լացի աշխարհ...

— Ի՞նչ կլինի մեր վերջը, նանի ջան. սըրտ-  
նեղութիւնից շրթունքներ կրծոտելով, ասաց Սա-  
սան, մօր ձեռքը կրծքին սեղմելով:

Խեղճ մայրը ի՞նչ գիտէր, որ ի՞նչ պատաս-  
խանէր:

Յովք երանելու պէս նստած էր նա, խոնաւ  
մարազում, և թափուած դարմանի աւարը հա-  
ւաքում, գլխի վրայով ցած էր թափում և ան-  
դադար աղէ արցունք թափում, հեծում, հառա-  
չում:

Մի ամբողջ օր նոքա կտրուած լոյս աշխար-  
հից, սոված, ծարաւ, մնացին մարազում հեծկ-  
տալիս:

Երեկոյեան պահուն, գիւղի տաւարը հան-  
դից վերադառնալու ժամին միայն, մի փոքրիկ  
ձեռք ծեծել սկսաւ դուռը. նորա մօտ կանգնած  
և լացող երեխայի ձայնից Սասան վեր թռաւ, և  
երբ, Սասա... Ազի... կանչել սկսան նոքա,  
մայրը և Սասան իսկոյն ճանաչեցին Անուշի  
ձայնը:

— Զան Անուշ... ջան Շուշան, դուք սրտեղ



էիք ետրանք. աղելսարչ լացով հարցրեց Ազիզը և մօտեցաւ դուռը բանալու:

— Այ՛ն, սոված եմ. հազիւ լսելի ձայնով թոթովեց 4 ասրեկան Շուշանը, որ իր քրոջ Անուշի ձեռից պինդ բռնած էր:

— Ձեր սովին, ձեր լացին դուրբան. դուրդունի ձեռք ընկած բալէք, անբախտ թոռներ. ասաց Ազիզը և դռան ետքից քարերը վերցնելով դուռը բացաւ և երկու թոռնուկներին իր գրկում պինդ սեղմելով, անթիւ համբոյրներ գրօշմեց նոցա դէմքին: Ապա Խասան գրկեց նոցա և փայփայեց, իսկ մայրը դուռը փակելով էր զբաղուած:

— Որտեղի՞ց էք գալիս. մայրիկդ ո՞ւր է, սիրուն Անուշ, անգին Շուշան, իմ ճրագ, իմ աչքի լոյս. հարցրին Ազիզը և Խասան:

— Ոչ ոք յետ չդարձաւ, վախենում էին թորքերից. իսկ մենք լաց էինք լինում և մեզ չսպանեցին. պատասխանեց Անուշը:

— Բայց ո՞նց եկաք, ի՞նչպէս, ո՞րտեղից դարձաք. անհամբերութիւնից այրուելով հարցրեց Ազիզը:

— Հէնց որ աղմուկը սկսեց, ասաց Անուշը, ես և հայրիկը աղբիւրի մօտ էինք. հայրիկը իսկոյն ինձ շալակեց և փախչել սկսաւ. մինչև կէս օր անընդհատ գնացինք, շատ գնացինք: Երբ տուզի կէսն անցանք, հայրիկը ասաց, թէ դէպի գետը

թեքուենք, էնտեղ մարդ է երևում, երևի հայեր կը լինեն:

Դեռ դարալթուններին չըհասած, գրանիկ... կրակեցին մեզ վրա. հայրիկը հրացանի ձայնը լսելուն պէս ինձ շալակից շարտեց, իսկ ինքը մի փոքր ձորով ցած փախաւ. չեմ իմանում թէ ո՞ւր էր գնում: Ես որ մենակ մնացի, փախայ, մի քարի տակ մտայ, շատ լաց եղայ. յետոյ, երբ հեռուից երևացող թուրքերը կորան, գողգողալով դուրս եկայ և հայրիկի եկած կածանով (շաւիղ) յետ դարձայ դէպի գիւղը: Ա՛խ, Խասան, ճանապարհին ինչէր չըտեսայ. մէկ կնիկ ընկած էր արիւնջուայ, նրա բերանից լերթ-լերթ արիւն էր թափվում. նայեցի, լեզուն կտրուած էր երևում. ինքչան խօսացրի, ը՛...ը՛... էր ա՛նում և լաց լինում:

Մէկ խեղճ տղամարդի էլ ոտների ծակներից կտրուած էր. նա մի մորթած տղայի մօտ չարչարվում էր, որ դուրս եկող արիւնը կտրի, բայց չէր յաջողվում: Հա՛, հէնց էդ մարդից մի քիչ հեռու էլ, մէկ կնիկ տեսայ վեր ընկած, նրա ծծերը և ձեռքերի մատներն էին կտրել: Լաց էր լինում նա, և ասում, ա՛խ, մահ, ո՞րտեղ ես, եկ, և ինձ ազատիր էս ցաւերից: Ես, հիմա էլ զարմանում եմ, թէ ինչո՞ւ լացս չէր գալիս, բայց էն կնիկանից շատ վախեցայ: Քիչ էլ որ գնացի, պատահեցի մեր հարևան Ազիւլին. նա իմ կոնից



բռնեց, զօռով ուզում էր տանել, ես փախայ. իմ ետքից նա ասաց. «Գնա՛, գնա՛, բեզ էլ շատերի պէս կսպանեն, հողեմ գլուխդ, գնա՛»...

Քիչ էլ առաջ վազեցի, յանկարծ Շուշանի ձայնը լսեցի. նանի՛, նանի՛ էր կանչում. դէպի ձայնը գնացի, տեսայ մի բարի վրա նստած լալիս է. հէնց որ ինձ տեսաւ, դէպի ինձ վազեց, գրկեց ինձ և լացը սաստկացրեց: Ես ասացի, լաց մի լինի՛լ, ձայնդ թուրքերը կլսեն, կգան մեզ կըսպանեն. Շուշանը լռեց և ձեռքից բռնած դէպի գիւղ եկանք:

Շուշանը ինձ ասաց, թէ Սերոբը մայրիկի հետ է, եթէ քիչ էլ գնանք, կպատահենք: Մի քանի բոպէ անցաւ և անա մեր առաջ մայրիկը. ես շատ վախեցայ, երբ տեսայ մայրիկի գլուխը կտրած, մարմնից բաժանած: Սերոբն էլ, սխ Սերոբ... Չանս բեզ մատնդ...

— Ի՛նչ... ճշաց Ազիզը. սպանուած է... հա՛...

— Նանի, ես բեզ մատող նանի, լուռ կաց, ինձ մի սպանի. յետոյ, յետոյ, ինչո՞ւ թողեցիք Սերոբին. հարցրեց Սասան.

— Սերոբը ընկած էր մայրիկի կրծքին և անվերջ ծծում էր: Ես իմացայ թէ կաթ է ծծում. բայց երբ բերանին նայեցի, տեսայ որ արիւնով լիքը: Ես և Շուշանը Սերոբին բռնեցինք, որ բերենք, բայց նա լաց էր լինում և չէր ուզում մայրիկից հեռանալ: Յետոյ Շուշանը հաց ուզեց

ինձանից, ես մայրիկի ջէբը պտրեցի, մի խնձոր գտայ և սի հատ սպիտակ փող. խնձորը ճանապարհին կերանք, իսկ փողը, այ...

Չեռքը գրպանը տարաւ և հանեց տաախն տուաւ մի հատ քսան կոպէկանոց:

— Սերոբը ի՛նչ եղաւ. շտապով հարցրեց Սասան. Սերոբը... ասա՛:

— Հա՛, յետոյ մենք ուզեցինք զօռով շալակենք բերենք, բայց հէնց որ թրանիկ, լսեցինք հրացանի ձայն, Սերոբին թողեցինք մայրիկի ծծի վրա և փախանք: Հա, Սասա, մոռացայ ասեմ, որ մայրիկի ճակատից պաշեցի, շատ ցուրտ էր. որ մայրիկի ճակատից պաշելիս այ, տես, ցոյց տալով իսկ Սերոբինից պաշելիս այ, տես, ցոյց տալով ծնոտը, շատ վատ շանկուտեց ինձ: Շուշանը շատ էր վախում մայրիկի բաց մնացած աչքերից. ասացի, պաշիր, ասաց, վախում եմ: Ճանապարհին միշտ լալիս էր. խնձորի մեծ մասը իրան տուի, էլի լալիս էր: Յետոյ մէկ թուրք մեզ պատահեց, ճիշտ գետին զրաղին. նա ուզեց մեզ մորթի, բայց մի թուրքի կնիկ չթողեց, մեզ ազատեց և չգիտեմ թէ ինչ ասաց մեզ, միտս չէ:

Եկանք, գիւղը հասանք. սևի Սասան, էնքան մարդ կայ սպանուած, անհաշիւ. իմ ընկեր թագուշին էլ տեսայ մորթած և ականջները կտրած: Բազարում կանգնած էին պրիստաւը և շատ թուրքեր. մօլլան էլ մի քանի կապոտած հայերի հետ խօսում էր. հայերը լաց էին լինում: Էդ-



տեղ մի թուրքի տղայ մի հաստ փայտով ինձ լսփեց, բայց շատ չցաւացրեց, ոչինչ. ուզեց Շուշանին էլ լսփի, ես չթողեցի: Պատի տակով կուշ եկած, սուս-փուս եկանք մեր հայեաթը. մինակ բօզ էշն էր մեր դռանը կանգնած, էլ ուրիշ գատ չկար. մեր տան մէջ թուրքեր շատ կային, նրանք պինդ-պինդ խօսում էին:

Մէկ էլ յետ նայեցի, տեսայ մեր հարեան Ալի կնէկը, Հիւրին, մեր ետքում կանգնած. նա մեզ մօտ կանչեց, ասաց. գնացէք ձեր մարագը. Սասան և Ազիզ տատին էնտեղ են: Ազի, Շուշանը որ Հիւրուն տեսաւ, լաց եղաւ, Հիւրին էլ մի հատ ծիրան տուաւ Շուշանին: Վերջը եկինք մին քարով դուռը թակեցի, անխ խասայ, էնքան բեղարած եմ, որ սոված լինելս միտս չի գալիս: Ազի, էլ մեզ սպանելու չեն թուրքերը... հարցրեց Անուշը, տատի աչքերին նայելով:

Բայց ի՞նչ էր Սասու և Ազիզի հալը, Անուշի ամբողջ նկարագրութեան ժամանակ: Շուշանիկը տատի գոգում արգէն քուն էր մտել, իսկ նոքա երկուսով լալիս էին:

— Սասա ջան, ծարաւ եմ, ասաց Անուշը.

— Մեզ համար ջուր չկայ, հաց չկայ, Անուշ ջան, մենք ծարաւ ու սոված պիտի մեռնենք. պատասխանեց Սասան և դարձաւ մօրը.

— Նանի, քնած է Շուշանը.

— Անջուր, անհաց ջաննեքիդ մատաղ, բա-

լամ ջան... լալ սկսեց Ազիզը, ես ձեր սև օրին մեռնեմ...

— Լաւ, լաւ, սո՛ւս կաց, թուրքերը ձայնդ կլսեն, կզան մեզ կկոտորեն. ասաց Սասան:

Մայրը լուեց. լուեցին և ամենքը: Ազիզը նիւհում էր: Անուշն էլ իր գլուխը դրաւ Սասու ծնկան վրա և քուն մտաւ: Արթուն էր միմիայն Սասան. նա մտածում և անվերջ մտածում էր.

— Ի՞նչ կլինի մեր վերջը, առաւօտ է լուսանալու, եարաք, մեզ կմասնէ Հիւրին, թուրքերը մեզ կկոտորեն, թէ՛ մի կերպ կազատուենք: Ախ, նանի ջան, հունց կանենք մենք, ջան, իմ, աղբերք, իմ քոյրեր, մեր թաղան հարսեր ջան... ջան... անխ, նանի, էս ի՞նչ կրակ էր:

Վայ... յանկարծ վեր թռաւ Ազիզը. այ, բալամ, քեանբախտ ջաններիդ մատաղ... լաց եղաւ նա. ես ի՞նչ մեղք ունիմ, այ Աստուած... հէյ... այ Աստուած...

Իեո խօսքը չվերջացրած ծնւղրո՛ւղրու... լըսուեցաւ արագաղի ձայնը:

— Փառք Աստուծոյ, դեռ գիւղում կենդանի շունչ կայ, կեանք կայ գիւղում:

Աքաղաղի ձայնը կտրելուն պէս, յանկարծ ոտքի տրոփին լսուեցաւ ճիշտ մարագի կտրին որին յետևեց, բը ան... բառաչիւն: Ազիզը և Սասան երկիւղից իրար կպան և ապա կովի բառաչիւնը լսելով, միամտացան և ձայնից ճանա-



չեցին հարևան Թագու Նոոնիկին, էն կաթնատու կովին:

Անցաւ մի առ ժամանակ և սկսուեցաւ աքաղաղների երկրորդ կանչը, որին միանալով շրներին հաջոցը, մի խառնափնթոր, մի կատարեալ քօս էր երևում գիւղը:

— Ա՛խ էս ի՞նչ կրակ էր, այ Աստուած, անտէր, չօլերն ընկած որդիք, իմ անգին հարսեր, ես ձեր ջանին մեռնեմ, էս ի՞նչ օրի հասանք... լալ սկսեց Ազիզը:

— Վ՛սէյ, այ կնէկ, դու մեզ կոտորել ես տալու, բաւական է, էլի... արանջաց Խասան:

Մայրը լռեց. մէջքը մարագի պատին յենած, քուն մտաւ:

Խասան փնաց դարձեալ արթուն, միայն նա էր լսում անդարար քնի մէջ խօսողներին և զգում կոշտ ու խոնաւ մարագում քնածների յանկարծակի վեր թռչելը:

Գիշերը լուսանալուն մօտ էր: Աքաղաղների երրորդ կանչը սկսուեցաւ:

Խասան մտածում և անվերջ մտածում էր, այրում էր նա:

— Ի՞նչու ապրել այսուհետև. ամբողջ քսան տարի արևի լուսի կարօտ, հօրս մեծ ու լի տանը մի կերպ կեանք եմ քաշել. այժմ էլ զրկուած ամենից, ինչո՞ւ, ինչո՞ւ ապրել: Ո՛ւր են եղբայրներս. նոցա գիակները եարանք, սր քարի, սր քօ-

լի տակ են այժմ ընկած: Չան, Սերսբ... գո՛ւ ինչ եղար, այ Աստուած գառը: Սերսբը, էն թըւվաան մանուկը որ սպանուած է, ես ինչո՞ւ համար ապրեմ, աւելորդ հող կոխեմ, օդ շնչեմ, հաց ուտեմ: Ո՛ւրի... սևի. հառաչեց նա և ապա շարունակեց:

— Առաւօտ է արդէն, աքաղաղները երեք անգամ կանչեցին, բայց մայրը դեռ քնած է: Հիմա երևի թուրքերն էլ ներս կմտնեն և մեզ կմորթոտեն. եթէ առանց անպատուելու մորթեն, շատ լաւ կլինի. բայց եթէ ընկնեմ շուն թուրքերի ձեռքը, նոցա կրքերին բաւականութիւն պիտի տամ, անխ, ինձ համար այդ մէկը անտանելի է... անխ... աւելի լաւ է մեռնել... բայց ի՞նչ միջոցով, ի՞նչ հնարքով... եարանք...

Խասան ձեռքը տարաւ գրպանը քրքրեց... ոչինչ չկայ... շըշընջաց նա:

Ապա կամացուկ մօր գրպաններն էլ պտրտեց — էլի դատարկ:

— Ա՛խ, էս ի՞նչ պատիժ է. Աստուածն էլ է մեզանից մի գանակը կտրել:

Երանի թէ մի թոկ լինէր, կարելի էր մարագի գերաններից մէկից կապել և կախուել, վերջանալ... մեռնել...

Այ... մէջքը կապած գօտին յանկարծ նրա ձեռքն ընկաւ. հրանալի միտք — գօտին գերանից կապել և վերջացաւ... ասաց նա և կամացուկ



բարձրացաւ տեղից, Անուշի գլուխը ծունկից ցած, գետին դրաւ, ճակատը համբուրեց և ոտքի ելաւ: Մթութեան մէջ Խասան շօշափեց և համբուրեց մօր ձեռքը և Շուշանիկի ճակատը:

Ապա լուռ և անձայն հանեց գօտին, պատից բռնեց. ձեռքերը դէպի առաստաղ վարզեց, գերան գտնելու: Շուտով նրան յաջողուեցաւ պատից գուրս ցցուած մի քարի վրա կանգնել և շատ յարմարաւոր մի տեղից կապել գօտին. գօտու մի ծայրը կապեց նա գերանից, իսկ միւս, օղակաւոր մասը ցած թողեց և ինքն էլ մնաց կախադանի մօտ պատրաստ... լուռ կանգնած:

— Ի՞նչ եմ անում ես, մի գործ, որը թերևս ոչ մի մարդ չկարողանայ կատարել... ճիշտն ինչ է... խեղդուելով մեռնել... սի շատ դժուար է: Կարելի է լուսանալուս հայ գիւղերից մեզ օգնութեան կգան, մեզ կազատեն... բայց Անուշը ինչեր էր պատմում... ինչեր...

— Վայ... նրա ականջին հասաւ մի կանացի ձիչ, գիւղի կողմից:

— Ա՛խ... սոսկաց Խասան, երևի լուսանում է և երևացող հայերին թուրքերը սպանում են. ինչո՞ւ եմ ուշացնում. մայրս կարող է զարթնել և խանգարել... բայց... առանց սրբութեան... մրմնջաց նա, և գրպանից մի կտոր չոր հաց բերանը դրաւ, քարը բարձրացաւ, բռնեց գօտու օղակաւոր ծայրից և սոսայ լսելի ձայնով.

— Աստուած... կարելի է, ես իմ արածս չեմ հասկանում. մեզն Գեղ... այլ կերպ չեմ կարող, չեմ կարող... ինձ ինչ որ բախտաւորութիւն ես տալու, էս խեղճերին, էս եսիրճներին տնւր... աղօթեց Խասան, և ապա երեսը խաչակնքեց, և շարունակեց.

— Գուցէ առաւօտը մի պրծումն, մի ազատութիւն կլինի, մի լաւ օր... անլաց ճր...

Վայ... սպանեցին... մի երկրորդ ձայն ճչաց, մարագին բաւական մօտ:

— Լաւն այս է, ինձ համար սրանից լաւ ազատիչ չի լինելու: Մեզն քեզ Աստուած... մնաք բարով անբախտ մայր, Շուշան, Անուշ. իմ կենդանի եղբայրներ, բարեկամներ, մնաք շարով. ես գնում եմ մեր տան սպանուած անդամների մօտ... նոցա և իմ կեանքը ձեզ ենք թողնում... մեղա քեզ... սի... ինչ դժուար է, ինչ ծանր է մեռնելը... ա՛խ...

Գօտու օղակաւոր ծայրը պարանոցը քցեց, կախուեցաւ:

Անցան մի քանի րոպէներ. Խասու տանջանքները վերջացան և նա մնաց կախուած օդում ճօճելիս: Լուսացաւ:

Առաւօտեան արևի շողքը իր պայծառ ճառագայթներից մի քանիսը ուղղեց մարագի դրան ճեղքով դէպի ներս, և Խասու դէմքը լուսաւորուեցաւ:



Ազիզը խոր քնի մէջ, երազի ձեռքից ազատուել չէր կարողանում: Նրան երևում էր, որ Սասան կարմիր շորեր հագած, քոյր ու հարսեր չորս կողմը պար բռնած, նրանով են ցնծում, նրանով են ուրախանում: Իսկ միւս կողմում, նա տեսնում էր զուռնա-դաւալով քէֆ և բոլորն էլ իրան պարելու են կանչում...

Ծանր երազից նա վեր թուաւ և աչերը դէպի արևի ճառագայթով լուսաւորուած Սասու երեսը դարձնելով, սոսկալի ձայնով ճչաց նա և փռուեցաւ գետնին: Նրա ձայնից քնած երեխաները վեր թուան տեղներից, Սասուն կախուած և տատին էլ ուշաթափուած տեսան: Նախ նոքա երկուսով մօտեցան տատին, որքան շարժեցին, կանչեցին նա չգարթնեց. ապա շարժեցին Սասուն, նա էլ չէր խօսում, այլ ճօճում էր օդի մէջ և ապա կանգ առնում:

Շատերը, որոնք կճանաչեն Բուշտունց Սասուն, երկար ժամանակ նրան չեն մոռանալ և կյիշեն Մինքէնդի զլխով անցած կրակը:

## ՇՔԱՆՇԱՆՆԵՐ... ՇՔԱՆՇԱՆՆԵՐ...

(Մէկ լրտեսի օրագրից)

Մեծ քաղաքի բանուկ փողոցներից մէկի վրա կառուցուած էր Ս. հոյակապ հիւրանոցը:

Այդ հիւրանոցի 4-րդ համարում, ճիշտ իմ համարի դէմ առ դէմ, ապրում էր մի նոր պաշտօն ստացած գաւառապետ:

Նորա նոր, թանգազին, շքեղ և սիրուն տարազը հանդիստ ու դադար չէր տալիս նրան. անընդհատ դիտում էր ոտքից մինչ գլուխ, ծուռը շտկում, ուղղում էր սիրուն, կօկէտ երեւուլու համար:

Մանաւանդ նորա կրծքին շարուած կէս դիւթին գոյնզգոյն ժապաւէնները և նրանցից կախուած շքանշանները... սև... սև. իսկապէս շքանշաններ... շքանշաններ. նոցա անընդհատ այս ու այն կողմ շուռ ու մուռ գալը, հակառակ կողմ թեքուիլը, մեծ տանջանք ու ցաւ էր պատճառում գաւառապետին և նա ստիպուած էր բոպէ առ բոպէ աչքը դէպի կուրծքը դարձնել և շուռ եկած շքանշանները ուղղել:

— Եւ յանկարծ... մտածում էր նա. փողոց-



ներում, ծանօթներին մօտ, իմ նոր բարձր շքր-  
ջանում, մի նկատողութիւն անեն ինձ, այ քեզ  
խայտառակութիւն, ինչպէս կարելի է, ինչպէս  
կարելի է... ինքն իրան տհաճում էր նա:

Անչափ հետաքրքրական, բայց հարիւրաւոր  
տիպերից մէկն էլ նա, իմ նոր և ժամանակաւոր  
հարեան լինելով, ես յաջողացրի գոնէ բաց դռան  
ձեղքից լինի, լրտեսել և լսել նրան: Իմ բաղդից  
այդ էլ այն օրը պատահեց, երբ նա թւում էր,  
թէ ի՞նչ միջոցներով և իր սր ծառայութեան հա-  
մար արժանացաւ շքանշանների և գաւառապետի  
պաշտօնի:

— Է՛ի աշխարհ... աշխարհ... սկսեց նա հա-  
ռաչանքով և յանկարծ գնււն-ոււ-պէտ: Այժմ  
միայն հասկանում եմ թէ սրն է իսկական և եր-  
ձանիկ կեանքը և ի՞նչ միջոցով կարելի է ձեռք  
բերել:

Դա... ի՞նչ էի ես երեք-չորս տարի առաջ-  
ով էր ինձ ճանաչում բացի իմ տանտէր Բ.-եանը:  
Առաւօտից մինչև երեկոյ մեծ աւելը ձեռքս ա-  
ռած, տուն, տեղ, բակ, փողոց աւլում և աւլում  
էի անընդհատ և ի՞նչ ոռճիկ, թիւ, անբախտ,  
աղքատ դռնապանութիւնը անտանելի էր ինձ  
համար:

Բայց թէ ի՞նչ կերպ դռնապանութիւնից քա-  
ղաքապահ դարձայ... հա միտս եկաւ բոլորը...  
բոլորը յիշում եմ:

— Մի անգամ, սկսեց նա և ընկզմուեցան  
բազկաթոռի մէջ. երբ մեր դռան առաջով անց-  
նում էր մի երիտասարդ, ես մօտեցայ թևից բռն-  
նեցի, տեսայ որ մի մաքուր հագնուած պարոն է,  
ծոցիցս հանեցի տանտիրոջիցս խնդրած թուղիկ-  
ները և զօռով նրա ձեռքը տուի, ու տարայ ոս-  
տիկանատուն: Չմոռանամ ասել, որ այդ այն տա-  
րուին էր, երբ ամեն մի դռնապան մի մի դագա-  
նակ պէտք է պահէին մօտները պատրաստ, և  
պատահած միտինգները պէտք է նրա հարուած-  
ներէ երկիւղից ցրուէին: Հա, երբ այն բռնած  
երիտասարդին հասցրի ոստիկանատուն, վկայեցի,  
որ նա այս թուղիկներից մեծ քանակութեամբ  
ցրում էր փողոցում, ես յետևեցի նրան, հաւա-  
քեցի այս բերածները, իսկ իրան էլ հազիւ կա-  
րողացայ բռնել և բերել: Անպիտանը շատ հիա-  
նալի ոռուներէն թէև կոտրատում էր, բայց ըստ  
սովորութեան ոչ ոք նրան չլսեց. բոլորն էլ ինձ  
և միայն ինձ էին լսում և ասածներս զրում: Ինձ  
և միայն ինձ էին խորհուրդ տուին շա-  
րունակել նոյն աշալուրջ հսկողութիւնը: Թէ և  
վարձատրութիւն էլ խոստացան, բայց չտեսայ:  
Պարոնին բանտ նստացրին, 3—4 ամիս նա այն-  
տեղ մնաց մինչև գործի քննութիւնը, յետոյ չեմ  
իմանում ինչպէս վերջացաւ... դա... քարը գը-  
լուխը...

Ես շարունակեցի իմ գործս: Թէ և իմ կող-



մից մի քիչ... ոչինչ... շատերը ինձնից աւելի էին գործուսմ... ոչինչ... իմը նոցա գործածի մօտ չնչին է...

Մի մութ գիշեր էլ կանգնած էի փողոցի մայթի վրա. առաջովս եկաւ, անցաւ մի ուսանող և բերնում քունած ծխախոտը դէպի ինձ ուղղած, փրս, փչեց, քիթ ու պոռնկս ծուխով լցրեց. բարկութիւնից քիչ էր մնում տրաքուէի. շտապով հանեցի զրպանիցս 5 ռ. գնած ատրճանակս և օղում երկու անգամ կրակելով, վազեցի դէպի ուսանողը սուլիչս փչելով: Երկու ընկերներս էլ միևս փողոցից վրա հասան և փախչող պարոնին բռնեցինք և ուղիղ դէպի ոստիկանատուն: Թէ և կորաւ իմ 5 ռ., բայց վնաս չունի: Վկայեցի, որ այդ պարոնը երկու անգամ ատրճանակից ինձ վրա կրակեց և ապա թողեց ու փախաւ. ես սուլեցի և ետքից ընկայ. ընկերներս նոյնպէս և մի կերպ կարողացանք բռնել: Խեղճ պարոնը, թէ մեր սուս վկայութեան վրա հերստած և թէ անակրնկալ ծուղակից ազատուելու յոյսից զրկուած, քիչ էր մնում տրաքուի. բայց ի՞նչ լեզուով էր խօսում նա—աֆերիմ ուսում... Լաց ու կրակը օգուտ չարաւ... նա էլ մի քանի օրով բանտ նստեց... հը... հը... դմ... դմ... դմ...

Բայց էն վարժուելին, սուհ... սուհ... սուհ... անպիտանի կրակոտ լեզուն ինձ շփոթեց, կաշկանդեց և ես կատարեալ խայտառակուած կրլի-

նէի, եթէ ողորմած հոգի ուստիկանը, որ անցեալ տարի ուսմբով սպանուեցաւ, ինձ չպաշտպանէր և չհաստատէր, որ ինքն էլ ծանօթ է նրան և տեսել է մի մեծ միտինգում նրան ճառախօսելիս: Նրան էլ անտես չարին...

Իսկ էն երկու լրագրավաճառ և հեռագրավաճառ վրացի տղերքը մի քիչ... վնաս չունի կրպատանի և... (բռնեցք է անում): Նոցա հասցրած հարուածը թեթե էր, բայց տեղը դեռ մնում է. (ցոյց տալով ձախ այտոսկրի սպին):

Նոցա էլ բռնեցի և մի կապոց յեղափոխական թերթեր, չեմ յիշում փողոցում գտածս, թէ մեր տպել տուածն էր, բայց ո՛չ, ո՛չ տպարանից խնդրածս էր: Թղթերն էլ տղորց հետ վերցրի, տարայ դարձեալ ոստիկանատուն և ասացի, որ սոքա բոլոր անցուղարձ անողներին ձրիապէս ցրում էին:

Մի քանի օր էլ նոքա փթեցին բանտում... և անա, հետեւեալ օրն էր կարծեմ, ինձ դարձրին քաղաքային քաղաքապահ (ГОРОДОВОЙ): Մտայ պաշտօնիս մէջ, բայց ի հարկէ քաղաքի անծանօթ մասում: Ինձ պատուիրեցին հաւատարմութեամբ և պարտաճանաչութեամբ ծառայել և կեանքս անգամ չխնայել վարչութեան պատուի, անուան համար:

Ի՞նչ կեանք... քաղաքապահ... փողոցի բոլոր գինեոները քո տրամադրութեան տակ են, միայն



Թէ մի ժամով ուշ թողնես որ փակեն: Օրուայ որ ժամին ուզում ես, մտիր, առաջդ կտրող չըկայ, զինու գաւաթը լիքն է զաստոյկի վրա, ձրկնեղէնն էլ կողբին սարբած: Իսկ ընկերներս... սէֆ, բոլորն էլ ճիշտ ինձ նման դարգիմաններ հայ զիտի օրեր... հա...

Վասօն միտս ընկաւ. անպիտանը լաւ տղայ էր. հիմա տեսնես սրտեղ է. բայց մի վատ սովորութիւն ունէր. այսինքն ոչ թէ վատ, այլ մի տեսակ... անսիրտ... ճշմարիտ գործունեայ: Իր հարագատ որդուն անգամ կծեծէր, կսպանէր, եթէ քաղաքային ընդհանուր վերահսկիչը պատուիրէր: Բայց ես իմ խորթ եղբօր և որա որդու հետ այդպէս չվարուեցայ. հինգ-հինգ ըուբլի միայն վերցրի նոցանից և միտինգից բաց թողեցի. թէ և քիչ հեռու ընկերներս մի քանի անգամ հասցրին, ֆրաս չունի. այնուհետև 5 ը. էլ մեռնելով չէր հանիլ զբաւանից: Կարծէք թէ մենակ ես էի այդպէս:

Այդ պաշտօնում ես հազիւ մի տարի մնացի... բայց թէ ինչեր չարի... եթէ մի առ մի զբի առնուի, նո՛ւ, զբբեր է որ կրկագմուի, կարդացող, զարմացող, հիասթափուող է միայն հարկաւոր:

Ապա իմ այսօրինակ ծառայութիւններին իբրև վարձատրութիւն պրիստաւի օգնական դարձրին և մի քանի շքանշաններ էլ կրծքիս շարեցին «հաւատարմութեան, պարտաճանաչութեան համար» մակագրութեամբ:

Ա՛խ, նոր-նոր եմ ամսասում, որ ուսում չունեմ. հօրս ի՛նչ ասեմ, եթէ երկար ապրէք, երկի դպրոց կուղարկէր ինձ: Մօրս պատմելով, խեղճ հօրս երբ ինչ-ինչ գողութեան համար սպանել են, ես երկու տարեկան եմ եղել:

Հայրդ, ասում է մայրս, շատ աշխատեց քաղաքապահ դառնալ, բայց չյաջողուեցաւ, որովհետև քիչ արբեցող էր և շաբաթներով փողոցներից տուն չէր գալիս. գէշ բնաւորութեան աէր է եղել. բայց եթէ հիմա կենդանի լինէր, շատ հեշտութեամբ պաշտօնի կըմտնէր. նա կարծեմ պաշտօն էլ ունեցել է... դա... լրտես նահանգապետի մօտ 25 ը. ամսական ռոճիկով. այդ պարզ է: Ինչ և իցէ...

Մի բան միայն մեր այս պաշտօններում գովելի է. այդ սելի պէս, գետի նման եկող աշխատանքն է. ո՞վ է քրտնում, ո՞վ է շարչարվում, բայց փո՞ղ, որքան ուզես... և շքանշաններ... բարձրանա՛լ... փո՞ղ... Հա, այս էլ ասենք, որ ինձ նմանների տգիտութիւնը երբէք աչքի չի ընկնում, մեր կարճ հրամանների, առանց երկար ու բարակ խօսակցութեան և շատ գրութիւնների բացակայութեան պատճառով: Տալիս են թղթեր, արպած, պատրաստ, իսկ մենք միայն անուն, ազգանուն ենք ստորագրում, այն էլ խառնի-խուռն խրզիբիզիով, որ սատանան անգամ չէ կարող որոշել: Ա՛յ, քեզ երես պարզ անող միջոց: Լաւ է, շատ...



Անցնում են ամիսներ... դարձեալ շքանշաններ... բայց ինձ և միմիայն Աստուծուն յայտնի գործերի համար, և ապա պը՛րբն-ամալ...

Ո՛ւֆ, սլրիստաւ, հնւ պրիստաւ... փո՞ղ... ուր ուզում ես թափիր, վերջ չըկայ... ի՛նչ կնշանակէ ցեղական առանձնայատուկ ընդունակութիւն:

Օրինակ. ո՞վ կարող է իւր հարևանի տան կնունքի նստած, քէֆ անողներին քշել, տանել ոստիկանատուն և ապացուցել, որ նոքա յեղափոխական գործերի մասին էին խորհրդակցում. ես, ես, և այդ իմ շնորքներից մէկն է: Եւ հէնց այդ շնորքների շնորհիւ պրիստաւութիւնից շուտով դարձայ գաւազան-պետ. ուֆ (ցոյց տալով ապօրէժները) ես ձեր գոյնին, ձևին մատնող...

Գաւառապետ, կամ գաւառի թագաւոր, մէկ է. տարբերութիւն չկայ. աղախին, բօննա, և այլն և այլն: Ամեն մէկից մի մի հատ ունիս տանդ: Իսկ էն նախկին անպիտանը ժլատ, սրիկայի մէկն էր. դրա համար էլ 10 գնդակով ընկաւ: Զահիրները շատ վատ են վարվել հետը. ես համոզւած եմ, որ նման դէպքեր այսուհետև չեն կրկնուիլ իհարկէ: Վերջապէս, ո՞վ կարող է համարձակուել. էհ, ի՛նչ լինելու է թող լինի, միայն ինձնից հեռու:

Ուտելու ժամը կարծեմ անցնում է. նայում է ժամացոյցին: Եւ թող կորչեն մթին, պղտոր մտքերըս անյետ... անդարձ... հեռով...

Գաւառապետը խօսքը վերջացրեց, ոտքի ե-

լաւ, երկար ձգձգուեցաւ, և ճաշել, ճաշել ասելով, դէպի հիւրանոցի սեղանատունն ուղղուեցաւ: Ես փախայ, մտայ սենեակս, յետոյ նրան յետևեցի և ես էլ ճաշելու գնացի սեղանատուն: Նա փառաւոր ճաշ էր պատուիրել. կերաւ, խմեց և հարիւր անգամ մենակ ճաշող տիկնոջ աչք ունքով արաւ, բայց ի զուր. նրա շարժումները անպատասխան մնացին և վերջը, էխ, աշխարհ... աշխարհ... հառաչելով ոտքի ելաւ և դէպի դուռը դիմեց:

Գռան մօտ յանկարծ շողշողացին երկու ատրճանակներ, և հնգական զոյգ զարկերով ծակոտեցին գաւառապետի գլուխը, բունը, ու ցած գլորուեցաւ նա:

Ատրճանակի իրար յաջորդող ձայնից տիկիներ փախաւ, նրա դիակի վրայով, փողոց դուրս եկաւ. իսկ գաւառապետը մնաց հիւրանոցի շէմքում անճոռնի կերպով ընկած. խմած զարեջուրը դուրս էր թափվում փրփրած բղբձակներով և խառնվում լճացած արեան հետ: Իսկ շքանշանները... որքան անպատշաճ էին նոքա. արիւնոտ ծուռ-մուռ, շուռ եկան...

Արիւնյուշայ շորեր և շքանշաններ ու շողշողուն ժապակէններ, բոլորն էլ արիւնով ներկուած, և բոլորն էլ այդպէս... և բոլորի կեանքն էլ շէմքում մարւող: Շարքեր... շարքեր... և բոլորն էլ այդպէս...









« Ազգային գրադարան



NL0362475



52121

